

կը հալեցնէ մեր սրտին անարմատ ընձիւղները իմաստէ: Միտքը կը շլացնէ: Ընկճողը՝ վարողը կամքն է: Ահա թէ ո՛ւր էր դժբախտութիւնը Մելիքիսանեանց Մաթիկին, որ զգայնութիւններով հարուստ իր անցեալին մէջ, անհայր իր պատանութեան օրերուն առիթ չէր ունեցած կամքի մը տարրերը ճարելու ու տարուբեր արարած էր: Միայլը՝ զինքը գործածողներուն, սա մարզերուն վրայ: Այս զգացական հարստութիւնը եսասիրական կղզիացում կ'որակելի գործողութեան մարդոց մօտ, որոնք միշտ պիտի արհամարհեն իրենք իրենց վրայ մեծահաւատ, իրականին մէջ մանուկի մը չափ ձախաւեր այդ իմացատարը մարդերը: Մեծ եսասէրները, մեծագարներ ըլլալէ առաջ, սկսած են մանկութիւններով: Զոհողութեան ընդունակութիւն մը չէր, որ կը պակասէր Մաթիկին: Անիկա իր ապագան չէր սակարկած, երբ մտաւ ստոյգ մահուան սա մրցարանը: Պակասածը՝ ուրիշներու հետ խանդավառելու կարողութիւն մը, որ զինքը կը մեկուսացնէր ցաւէ կամ հաճոյքէ: Ա՛յնքան խորապէս տարուած էր խօսքին հրապոյրովը, որ չէր զգար իր ձգուելը մինակ՝ մտիկ ընող շրջապատին: Ասիկա կը պատահի, երբ շրջուն գործիչներ տեղ մը յամենան ու ստիպուին նոյն միտքերը կրկնելու ամիսներով: Անիկա անհատապաշտ, եսամոլ ցաւագար մըն ալ չէր, ինչպէս է պարագան շատ մը արտակեղրոն հիւանդներու, զօրեղ իմացականութեամբ, բայց կաւէ կամքով, որոնք իբր հրթիռ համախմբումները կը խանդավառեն ու կը տարուին -բռնի կամ կամաւբեմին ետեւը, խնայելու համար չուշացող կործանումը: Մաթիկ իր անձին համար չէր հետապնդած ոչ մէկ շնորհ կամ վայելք: Ու չէր սիրուած: Թերեւս մեծագոյն զսպանակը իր վրիպանքին: Ու կը շրջէր, կը թափառէր ահա, չէր գիտեր ինչու: Ան միշտ խուսափեցաւ իր պտտած շրջաններէն շօշափելի փաստեր դնելու մէջտեղ ա՛յն դատին հաշուոյն, որուն քարոզը կը դաւանէր իր անձը: Այն օրերուն, պոլսական դպրոցէ յեղափոխութիւն մը (այնքան ընդարձակ է այս տարագր, իր մէջ ընդգրկելով